
ՌԱՖԱՅԵԼ ՀԱԿՈՒՅԱՆՑ



Տաղանդավոր երաժիշտ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի վոկալ և կամերային անսամբլի ամբիոնների պրոֆեսոր Ռաֆայել Հակոբյանցը ոչ միայն ջութակահար, երգիչ, այլ նաև հմուտ մանկավարժ, լրագրող և հասարակական գործիչ էր: Երաժշտությանն անմնացորդ նվիրված Ռ. Հակոբյանցի ստեղծագործական և լուսավորական գործունեության նշանակությունը դժվար է գերազնահատել. այն մշտապես ուղղված է եղել հայ կատարողական արվեստի զարգացմանը և այդ արվեստը Հայաստանում և նրա սահմաններից դուրս արժանավայել ներկայացնելուն:

Ռաֆայել Հակոբի Հակոբյանցը ծնվել է 1942 թ. օգոստոսի 11-ին Բաքվում, տնտեսագետի ընտանիքում: 1949 թ. ընդունվել է Բաքվի Բյուլբյուլօղլու անվ. միջնակարգ մասնագիտական երաժշտական դպրոցի ջութակի դասարանը՝ սովորելով Մուսլիմ Մազումանի և Ավետ Տերտերյանի հետ: Այնտեղ նա ծանոթանում է Զարեհ Սահակյանցի հետ, որը Բաքու էր եկել մասնակցելու անդրկովկասյան մրցույթին և նրան համոզել էր գնալ հայրենիք: 1960 թ., երբ ընտանիքը տեղափոխվում է Երևան, նա ուսումը շարունակում է Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական դպրոցում Վիլլի Մոկացյանի, ապա՝ Երևանի պետ. կոնսերվատորիայում պրոֆ. Հրաչյա Բոգդանյանի դասարաններում: Ուսման տարիներին բացահայտվում է նրա տաղանդը՝ երգեցիկ ձայնը (բարիտոն), և Հակոբյանցը 1966 թվականից սովորում է նաև կոնսերվատորիայի վոկալ բաժնում՝ ուսանելով Բզաբեյլա Այդինյանի, հետագայում՝ պրոֆ. Գոհար Գասպարյանի դասարանում (1966-1973): Ավարտելով կոնսերվատորիայի լարային բաժինը՝ նա 1970 թ. աշխարանքի է անցնում է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի

նվագախմբում՝ որպես ջութակահար: Այդ տարիներին էլ տեղի է ունենում Հակոբյանցի դեբյուտը նաև օպերային բեմում. սովորելով դեռ III-րդ կուրսում՝ նա հանդես է եկել բժշկի դերում՝ խաղընկեր ունենալով Գոհար Գասպարյան-Վիոլետային Վերդիի «Տրավիատա» օպերայում: Առաջին իսկ էլույթից նա իրեն դրսևորեց որպես խոստումնալից երգիչ-դերասան՝ դառնալով օպերայի ասիստենտ-ստաժոր, իսկ հետագայում՝ մեներգիչ: Օպերային թատրոնին նվիրաբերած 27 տարիների ընթացքում Հակոբյանցը հատկապես փայլում է եվրոպական և ռուսական Մազետտո (Մոցարտ, «Դոն Շուան»), Դոն Կայրո (Բիզե, «Կարմեն»), Ֆիորելլո (Ռոսսինի, «Սևիլյան սափրիչ»), գորավար Պոլկան (Ռիմսկի-Կորսակով, «Ոսկե աքաղաղ»), մավրիտանացի բժիշկ Էբն Հաքիա (Չայկովսկի, «Իռլանտա»), ինչպես նաև հայկական՝ եպիսկոպոս (Չուխաճյան, «Արշակ Բ»), Սպանդարատ (Տիգրանյան, «Դավիթ Բեկ»), Օհան ախպեր («Անուշ») օպերաներում: Խորապես ճանաչելով թատրոնի երկացանկը և՛ վոկալիստի, և՛ նվագախմբի արտիստի տեսանկյունից՝ Ռ. Հակոբյանցն իր գործընկերներին մշտապես օգնել է մասնագիտական և հոգեբանական խորհուրդներով՝ անհրաժեշտության դեպքում հանպատրաստից փոխարինելով բացակայող մեներգիչներին, որոնցից հատկապես հիշարժան են Տոնիոյի և Ամոնասարոյի դերերգերը՝ Լեոնկավալլոյի «Պայացներում» և Վերդիի «Աիդայում»: Բարձրարվեստ դաշնակահարների, այդ թվում՝ անզուգական կոնցերտմայստեր Մարիաննա Հարությունյանի նվագակցությամբ Ռ. Հակոբյանցը հանդես է եկել բազմաթիվ համերգներում՝ ներկայացնելով օպերային և կամերային երաժշտության գոհարները, դառնալով Դ. Շոստակովիչի, Դ. Կաբալևսկու, Գ. Սվիրիդովի, Ա. Մելիք-Փաշակի կամերային ստեղծագործությունների առաջին կատարողը Հայաստանում:

Ռ. Հակոբյանցն աշխատել է նաև Հայաստանի Ազգային սիմֆոնիկ և Ռադիոյի սիմֆոնիկ նվագախմբերում: Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում ղեկավարելով կամերային անսամբլի և մասնագիտական վոկալի դասարանները՝ նա արժանացել է դոցենտի (2004), ապա՝ պրոֆեսորի (2009) կոչումների: Խ. Աբովյանի անվան Մանկավարժական ինստիտուտում նա վարում էր գեղագիտության ամբիոնի ձայնադրման և ձայնավարժանքի դասընթացները, նաև հասարակական հիմունքներով մշակույթի համալսարանի երաժշտության ֆակուլտետի ղեկանն էր (2001-2012): 1986 թ. Ռ. Հակոբյանցը ավարտել է ԽՍՀՄ մշակույթի նախարարության երկամսյա դասընթացը՝ աշխատանքային փորձաշրջան անցնելով Մոսկվայի Մեծ թատրոնում: 1988-1991 թթ. ղեկավարել է Երևանի օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի ռեժիսորական բաժինը, եղել է թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ: Նա նաև Հայաստանում կայացած՝ Ա. Բսահակյանի անվան հանրապետական մրցույթի ժյուրիի, «Բելկանտո» (1996), Ա. Կարապետյանի անվան (1999) հանրապետական, ինչպես նաև Մ. Գլինկայի անվան համամիութենական (Ե., 1984, Բաքու, 1987) և Պ. Չայկովսկու անվան միջազգային մրցույթների (Մ., 1986) կազմկոմիտեի անդամ էր: Նրա նախաձեռնությամբ կազմակերպվել են «Վերդիանա»,

«Զարթոնք» փառատոները, իրականացվել բազում թեմատիկ համերգներ, այդ թվում՝ հուշ-երեկոներ՝ նվիրված հայ բեմի երախտավորներ Նար Հովհաննիսյանի, Գոհար Գասպարյանի, Մարիաննա Հարությունյանի, Գոհար Գալաչյանի, Տիգրան Լևոնյանի և այլոց պայծառ հիշատակին: Նրա վերջին ելույթն իր ուսանողների հետ էր՝ իր 70-ամյակին նվիրված (2012 թ. օգոստոսի 29) համերգում, որտեղ կատարեց Օհան ախպոր դերերգը «Անուշ» օպերայից:

Ողջ կյանքի ընթացքում Ռաֆայել Հակոբյանը լայն կապեր ուներ հանրահռչակ երաժիշտների՝ Զարուհի Դոլուխանյանի, Պավել Լիսիցյանի, Իրինա Արխիպովայի, Ելենա Օբրազցովայի, Վադիմ Շուբլաձեի, Թամարա Մինյավսկայայի, ինչպես նաև հայ բեմի բազմաթիվ երախտավորների հետ: Իրեն հատուկ ոգեշունչ, անսպառ եռանդով նա մշտապես որոնել և գտել է ուսանողների տաղանդը բացահայտելու և զարգացնելու առավել արդյունավետ ուղիներ: Այսօր կարող ենք հպարտությամբ խոսել Ռ. Հակոբյանցի երգեցիկ դպրոցի մասին, որի համար ամենակարևորը ձայնի բնական հնչեղությունն է: Նրա ուսանողները հաղթող են ճանաչվել բազմաթիվ միջազգային մրցույթներում և այժմ էլ հաջողությամբ հանդես են գալիս Հայաստանի և աշխարհի բարձր բեմերում: Նրանց թվում են Երևանի օպերային թատրոնի մեներգիչներ Ալինա Փահլևանյանը և Լիպարիտ Ավետիսյանը, Մոսկվայի Կ. Ստանիսլավսկու և Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի թատրոնի, նաև Մեծ թատրոնի մեներգիչ Արսեն Սողոմոնյանը (Ռուսաստան), Լոնդոնի թագավորական ակադեմիայի օպերային ստուդիայի մեներգչուհի Թերեզա Գևորգյանը (Մեծ Բրիտանիա), Ռոստոկի օպերային թատրոնի մեներգիչ Կարեն Խաչատրյանը (Գերմանիա), Լիոնի օպերային թատրոնի մեներգչուհի Թեհմինե Զարյանը: Ուսուցչի գործը կոնսերվատորիայում այժմ շարունակում է նրա ուսանող և օգնական Ալինա Փահլևանյանը: Իր ուսուցչի հիշատակին և նրա դպրոցի ավանդույթներին հավատարիմ Լիպարիտ Ավետիսյանը վերջերս համոզիչ հաղթանակ տարավ Մոսկայում կայացած՝ Մուսլիմ Մագոմաևի անվան մրցույթում:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ն. Ա.